Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հունիսի 6 -ի N 321 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶԵՐԻՆ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի, մասնավորապես, Վայոց ձորի մարզում բժշկական հաստատություններին, սահմանամերձ բուժկետերին բժշկական առաջին բուժօգնության պարագաներով հագեցում, զինվորական հաշմանդամներին և բնակչության առավել խոցելի խմբերին՝ սոցիալ-առողջապահական, վերականգնողական աջակցություն:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով ակնկալվում են հարկային և մաքսային արտոնություններ:
3.	Բարեգործ	Սուրեն Գարեգինի Գասպարյան (Անձնագիր AM0531788 տրված 24.11.2011թ. 009-ի կողմից) Հասցեն քաղ. Երևան, Նոր Արեշ 35 փող., տուն 19
4.	Ծրագրի կատարողը	«Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպություն Հասցեն՝ քաղ. Երևան, Նոր Արեշ 35 փող., տուն 2 ՀՎՀՀ՝ 02252332
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ մարզեր, բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 20.000.000 (քսան միլիոն) դրամ՝ 2019թ - 8.000.000 (ութ միլիոն) դրամ 2020թ – 6.000.000 (վեց միլիոն) դրամ 2021թ – 6.000.000 (վեց միլիոն) դրամ

7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ սահմանամերձ տարածքներ, բուժկետեր, սոցիալապես անապահով անձինք, զինվորական հաշմանդամներ, մասնավորապես, Վայոց ձորի, այլ մարզերից՝ սոցիալական ծառայությունների կողմից ներկայացված հաշմանդամներ և սոցիալապես անապահով անձինք:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2019 թվականի մայիսի 20-ից մինչև 2021 թվականի մայիսի 20-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը, ժամկետները, անհրաժեշտ ֆինանսա-կան միջոցների ծավալը	Հիմնականում նախատեսվում է ներմուծել բարեգործական բեռներ՝ նոր և օգտագործված հագուստ, բժշկական, առաջին բուժօգնության, անձնական խնամքի և հիգիենայի պարագաներ: Երեք տարվա կտրվածքով, ընդհանուր ծրագրերը լինելու են շարունակական: Ծրագրի 1-ին տարում ձեռք կբերվի մարդատար ավտոմեքենա, որը կշահագործվի ծրագիրը իրականացնելու նպատակով: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 20 000 000 դրամ, որից՝ 2600 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ կազմում է մեքենայի արժեքը, իսկ տեղափոխման և այլ ծախսերը կազմել են 35,000 դրամ (ընդամենը՝ 1,294,000 դրամ):
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանք-ների ու ծառայությունների համառոտ նկարագրությունը, ծավալները և նախատեսվող գինը	Հիմնականում նախատեսվում է ներմուծել բարեգործական բեռներ՝ մեծահասակի օգտագործված հագուստ, նոր մանկական հագուստ և խաղալիքներ, բժշկական, առաջին բուժօգնության, անձնական խնամքի պարագաներ: Երեք տարվա ընթացքում նախատեսվում է, ըստ նախնական պայմանավորվածությունների ներմուծել տարեկան 6.000.000 (վեց միլիոն) դրամի բարեգործական բեռներ, բեռները բաշխելու և հաշմանդամ շահառուների հետ աշխատելու նպատակով: ՀԿ-ն իր բոլոր գրասենյակներում կկազմակերպի նաև ամենամսյա բաց դռների օր, որը հնարավորություն կտա շահառուներին բարեգործական բեռից անձամբ ընտրել անհրաժեշտ պարագան և հագուստը:
11.	Ծրագրի իրականացման հետ կապ-ված կազմակերպական ծախսերը	Նախատեսված է ներմուծել մեկ մարդատար մեքենա, Opel Zafira մակնիշի (նույնականացման համարը WOLOTGF7532197311) արժեքը՝ 2600 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: Մարդատար մեքենան նախատեսված է շահառու հաշմանդամներին տեղափոխելու, սոցիալապես անապահով անձանց համար նախատեսված հագուստներն իրենց բնակավայրեր հասցնելու և բաշխելու, ինչպես նաև բժշկական պարագաները ՀՀ ՊՆ զինվորական հոսպիտալներ տեղափոխելու նպատակով: Մեքենայի տեղափոխման արժեքը 35000 դրամ է: Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական այլ ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կա-ռավարման, տեղական ինքնակառա-	Ծրագրի իրականացման ժամանակ նախատեսվում է համագործակցություն ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի

	վարման մարմինների, այլ կազմակեր-պությունների հետ	նախարարության, Վայոց ձորի մարզպետարանի և համայնքապետարանների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատ-մամբ վերահսկողության մեխանիզմ-ների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության վերահսկողությունը կիրականացվի «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ի կողմից, ինչպես նաև ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ